72բ․ Զանպիտան գծող եւ զստացաւղ սբ․ տառիս եւ զեղբաւրորդիս իմ զՅովաննէս սարկաւագ, որ զանձն ի յաշխատանս եդ ջանակից լինել մեզ՝ մանաւանդ թէ գյոլով մասն սա գրէ․ վս․ որոյ աղաչեմ յիշ (s!) ի տր․ գիս զապիկարս Կիւրակ․ եւ զՅովանէս եւ զծնաւղսն մեր: եւ Աձ․ զյիշողսդ յիշէ ամէն․ եւ որ զամէնն ասէ: ամէն:*

135ա․ Զյակոբոս սրբասնունդ կրաւնաւոր յիշե-ցէք ի Քս․, որ զշիքիրոնս շնորհեաց, եւ Աձ․ զձեզ յիշէ ամէն:

205ա․

Ամենունակ տրդ․ բարի,
Պարունակաւղդ բոլորի,
եւ խնամածու մարդկան սեռի
բարունոյ Կիրակոսի․
եւ Յովաննէս քարտուղի
եւ Թորոսի կրաւնաւորի․
յաւհեղ աւուր դատաստանի,
յորժամ բազմիս ի մեծ բեմի․
արդարադատ քո աւրինի,
ոչ արասցես ի մեր դիմի,
այլ շնորհաւք քո հրամանի
մեր յանցանաց աւ․ (ամենայնի)
լեր դու քաւիչ յայս աշխարհի
եւ յաւհաւոր դատաստանի․
ամէն ամէն եւ եղիցի:

234բ․

Յորժամ յաւէտ եզր կալցի
բանք մատենիս զոր աստ գրեցի,
յիշեա զգծողս այսմն տառի
տր․ իմ Յս․ Դաւթեան որդի
անեղ բանիւ հաւրն մեծի
եւ զասեցո յաջեաց դասի,
ծնաւղք զարմիւք մեր հայրենի,
երգել քեզ փառս անլռելի,
անձայն երգով որ ոչ լսի,
այլ իմանալ միշտ ճանաչի:
Կարապետի այսմ գծողի
թէ տր․ Յս․ նմա ողորմեսցի:

254ա․ Ողորմեա տր․ Կարապետ երիցու եւ ծնո-ղաց իմոց Գրիգորի եւ Հաղբեւարդի:
259ա․ Գիրքս այս ի յիշատակ Կիւրակոս վարդա-պետի:

277ա․ Տր․ Աձ․ ի քո յաւհաւոր գալստեանդ ո-ղորմեայ գրիս գրող աւողի Կիրակոս վդի․ եւ ծնողաց իւրոց եւ արժանի արայ լսել զերանաւէտ ձայնն․ եթէ եկայք աւրհնեալք հաւր իմո: ընդ նմին զմեղապարտ անձս զԿարապետ եւ զծնողս իմ:

291բ․ Բարերար տր․ ողորմեա Կիրակոս վարդա-պետի եւ ծնողաց իւրոց եւ ինձ մեղապարտ Կար․

312ա․ Զմեծ բարունապետն զեսայի եւ զհետեւող նորին զԿիրակոս վարդապետն, ընդ նոցին եւ զմեղաւոր հոգս Տիրացու գրիչ աղաչեմ:

368ա․

Տր․ խնամօղ աւ․, (ամենայնի)
որ պաշտպան ես մարդկան ազգի․
լեր ծառայից քոց հովանի՝
գրիչ Թորոսի եւ Յովհաննիսի․
զերծո յաւուրն դատաստանի
ի գազանէն դառնամաղձի․
որ չար խորհի մարդկանս ազգի․
քարշել ի վիհ կորստենի․
քեզ պաղատիմք միշտ անձկալի․
կարկառեա ձեռն օգնականի
ձրգեա զբազուկդ հայրենի․
որպէս արծուի թեւք տարածի
ածել ըզգինս արեանդ մեծի,
ոչ ի զր․ գալիս Պաղեստինի,
այլ յերկնայինդ առագաստի․
միայն զոռողն ընկըմեսցի
փրկեալք երդեն զերդ նըւագի
ըզյաղթականն օրհնութենի:

534բ․ Ղուկասի պատկերի տակ․
Զանարժան գրիչ Թորոս․ յիշեա ի տր․ Յս․ Քս․:

565բ․ Յովհաննու եւ Պրոխորոնի պատ-կերի տակ․

Զսբ․ պատկերաց նկարագրօղս զԹրոս․ յիշեա ի տր․ Յս․ Քս․:

611ա․

Զմովսէս մեղաւք մեռեալ ոգի
վըշտաւք բազում պատեալ զերի
Յիշման առնել միշտ արժանի
ասել թէ տր․ ողորմեսցի․
ընդ որս եւ նոյնն ձեզ լիցի:
Եւ Քի․ մարդասիրի
Փառք եւ պատիւ յամենայնի:

653ա․

Որ կապեցար ի Պաղեստին,
արձակեցար ի Հռոմ կրկին,
Լեր բարեխաւս Կւրակոսին (s!)
եւ գծօղիս ըստ մեր կարին․
այղ եւ ծնողաց մեր եւ զարմին․
եւ որ ասէ թէ եղիցին:

679ա․ Տր․ Աձ․ ամի․, որ փրկեցեր զՅովսէփ յեղբարցն սպանմանէ, եւ անարատ պահեցեր յԵգիպ-տուհոյն չար ցանգութենէ, պահեա զսբ․ բարունապետն Կիր․ եւ զմեղաւք դատապարտեալ գրիչս ի կամս քո․ նաեւ զծնողսն մեր եւ ի յաւիտենական հրոյն ազատեա զմեզ, եւ քեզ փառք յաւիտեանս․ ամէն:

**Շեղագրով․**
Որ սպանես զվիշապն մեծ զամբարտաւան հայրն չարեաց, սպան եւ զիմ հոգւոյս դըժողն զիմանալի եւ

*Տես պատկ․ 209: